

Կ-285-16.09.2019-ՏՀ-011

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ՕՐԵՆՔԸ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ

### ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** Հայաստանի Հանրապետության 2016 թվականի հոկտեմբերի 4-ի հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) 4-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետում լրացնել նոր՝ «է» ենթակետ.

«է. մինչև 2018 թվականի հունվարի 1-ը ավարտված հաշվետու ժամանակաշրջանների համար ներկայացված՝ ԱԱՀ-ի կամ ակցիզային հարկի հաշվարկներով (այդ թվում՝ ճշտված) առաջացած՝ բյուջեից հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի կամ ակցիզային հարկի գումարներից և դեբետային գումարներից.»:

**Հոդված 2.** Օրենսգրքի 325-րդ հոդվածի 4-րդ մասը «հաշվին» բառից հետո լրացնել «, ինչպես նաև մինչև 2018 թվականի հունվարի 1-ը ավարտված հաշվետու ժամանակաշրջանների համար ներկայացված՝ ԱԱՀ-ի կամ ակցիզային հարկի հաշվարկներով (այդ թվում՝ ճշտված) առաջացած՝ բյուջեից հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի կամ ակցիզային հարկի գումարների հաշվին,» բառերով:

**Հոդված 3.** Օրենսգրքի 348-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում *«եռամսյակին հաջորդող ամսվա 21-ի դրությամբ ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարի,»* բառերից հետո լրացնել «Օրենսգրքի 457-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված՝ բյուջեից հաշվանցման ենթակա ԱԱՀ գումարի,» բառերով,

2) 7-րդ մասը «փոխհատուցվող գումարի» բառերից հետո լրացնել «, ինչպես նաև Օրենսգրքի 457-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված՝ բյուջեից հաշվանցման ենթակա ԱԱՀ գումարի» բառերով,

3) 8-րդ մասում «իսկ յուրաքանչյուր հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 21-ի դրությամբ ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարի հաշվարկն՝ այդ ժամկետի դրությամբ» բառերը փոխարինել «իսկ յուրաքանչյուր հաշվետու եռամսյակին կամ Օրենսգրքի 457-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված՝ յուրաքանչյուր կիսամսյակին հաջորդող ամսվա 21-ի դրությամբ ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարի կամ բյուջեից հաշվանցման ենթակա ԱԱՀ գումարի հաշվարկն՝ այդ ժամկետի դրությամբ» բառերով,

4) 10-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«10. Կառավարության սահմանած չափանիշներին բավարարող հարկ վճարողների

կողմից ներկայացված՝ ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափով հարկվող գործարքների գծով, ինչպես նաև յուրաքանչյուր հաշվետու եռամսյակին կամ Օրենսգրքի 457-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված դեպքերում՝ յուրաքանչյուր հաշվետու կիսամյակին հաջորդող ամսվա 21-ի դրությամբ ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարի կամ բյուջեից հաշվանցման ենթակա ԱԱՀ գումարի մինչև 40 միլիոն դրամի հայտերի հիման վրա ԱԱՀ-ի գումարների մուտքագրումը միասնական հաշվին կատարվում է Կառավարության սահմանած պարզեցված ընթացակարգով և ժամկետներում:»:

**Հոդված 4.** Օրենսգրքի 456-րդ հոդվածում՝

- 1) 7-րդ մասը ճանաչել ուժը կորցրած,
- 2) 8-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«8. Եթե Օրենսգրքի 325-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգով ԱԱՀ-ի և (կամ) ակցիզային հարկի գծով հարկային պարտավորությունների մարումից հետո հարկային մարմին ներկայացվող՝ ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկով կամ ԱԱՀ-ի կամ ակցիզային հարկի հաշվարկներով պակասեցվում են նախկինում հարկային մարմին ներկայացված համապատասխան հաշվարկով հայտարարագրված հարկային պարտավորությունները, ապա հարկ վճարողի անձնական հաշվի քարտում առկա դեբետային գումարների կամ մինչև 2018 թվականի հունվարի 1-ը հաշվետու ժամանակաշրջանների համար ներկայացված՝ ԱԱՀ-ի կամ ակցիզային հարկի հաշվարկներով (այդ թվում՝ ճշտված) առաջացած՝ բյուջեից հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի կամ ակցիզային հարկի գումարների հաշվին մարված գումարը կրկին վերականգնվում է հարկ վճարողի անձնական հաշվի քարտում՝ որպես դեբետային գումար կամ որպես բյուջեից հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի կամ ակցիզային հարկի գումար (չի մուտքագրվում միասնական հաշվին):»:

**Հոդված 5.** Օրենսգրքի 457-րդ հոդվածում լրացնել նոր՝ 7-րդ մաս.

« 7. Եթե մինչև Օրենսգիրքն ուժի մեջ մտնելը որևէ կիսամյակին հաջորդող ամսվա 21-ի դրությամբ հարկ վճարողն ունի հաշվետու ժամանակաշրջանում հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի գումարների՝ հարկվող շրջանառության նկատմամբ հաշվարկված ԱԱՀ-ի գումարները գերազանցող գումար (սույն մասի կիրառության իմաստով՝ բյուջեից հաշվանցման ենթակա ԱԱՀ գումար), ապա այդ գումարը օրենքով սահմանված կարգով պետական գրանցում (հաշվառում) ունեցող հարկ վճարողի գրավոր դիմումի հիման վրա Օրենսգրքի 17-րդ բաժնով սահմանված կարգով իրականացվող ստուգման կամ ուսումնասիրության արդյունքներով հիմնավորվելու դեպքում մուտքագրվում է միասնական հաշվին, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի: Սույն մասի դրույթները տարածվում են յուրաքանչյուր կիսամյակի հաշվետու ժամանակաշրջանների համար հարկային մարմին ներկայացված ԱԱՀ-ի հաշվարկներով առաջացած՝ հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի գումարների՝ հարկվող շրջանառության նկատմամբ հաշվարկված ԱԱՀ-ի գումարները գերազանցող գումարի (բյուջեից հաշվանցման ենթակա ԱԱՀ գումար) վրա:»:

**Հողված 6.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, բացառությամբ սույն օրենքի 2-րդ և 4-րդ հոդվածների, որոնք ուժի մեջ են մտնում 2020 թվականի հունվարի 1-ից: Սույն օրենքի պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրվա դրությամբ առկա՝ Օրենսգրքի 457-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված՝ մինչև 5 միլիոն դրամը ներառյալ բյուջեից հաշվանցման ենթակա ԱԱՀ գումարի մնացորդը մուտքագրվում է օրենքով սահմանված կարգով պետական գրանցում (հաշվառում) ունեցող հարկ վճարողի միասնական հաշվին, առանց հարկ վճարողի կողմից դիմումի ներկայացման և Օրենսգրքի 17-րդ բաժնով սահմանված կարգով իրականացվող ստուգման կամ ուսումնասիրության:

## **ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ**

### **«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՄԱՆ**

#### **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները.**

ՀՀ հարկային օրենսգրքի 325-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ԱԱՀ-ի և ակցիզային հարկի պարտավորությունները նախ մարվում են տվյալ հարկատեսակի դեբետային գումարների հաշվին, ապա միասնական հաշվում առկա գումարների հաշվին, այնուհետև՝ գանձապետարանի կողմից վարվող պետական բյուջեի միջոցների առանձին ենթահաշվում առկա՝ մինչև օրենսգիրքն ուժի մեջ մտնելն առաջացած գերավճարների հաշվին: Օրենսգրքի 456-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ օրենսգիրքն ուժի մեջ մտնելուն հաջորդող հաշվետու ժամանակաշրջանների համար հարկային մարմին ներկայացվող ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկներով առաջացող հարկային պարտավորությունների մարումն առաջնահերթորեն կատարվում է հարկ վճարողի անձնական հաշվի քարտում առկա դեբետային մնացորդի, հետո նոր միայն՝ միասնական հաշվին առկա գումարների հաշվին: Օրենսգրքի 348-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված է, որ Կառավարության սահմանած չափանիշներին բավարարող հարկ վճարողների համար ԱԱՀ-ի գումարների միասնական հաշվին մուտքագրման պարզեցված ընթացակարգը կիրառվում է ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափով հարկվող գործարքների գծով ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարի մինչև 20 միլիոն դրամի հայտերի գծով:

Միաժամանակ, օրենսգրքի 74-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված է, որ եթե յուրաքանչյուր հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 21-ի դրությամբ ԱԱՀ վճարողն ունի ԱԱՀ-ի փոխհատուցվող գումար, ապա այդ գումարը ԱԱՀ վճարողի գրավոր դիմումի հիման վրա օրենսգրքի 17-րդ բաժնով սահմանված կարգով իրականացվող ստուգման կամ ուսումնասիրության արդյունքներով հիմնավորվելու դեպքում մուտքագրվում է

միասնական հաշվին: Ընդ որում, օրենսգրքի 449-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 21-ի դրությամբ ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարն ԱԱՀ վճարողի գրավոր դիմումի հիման վրա միասնական գանձապետական հարկային հաշվին մուտքագրվելու դրույթը վերաբերում է օրենսգիրքն ուժի մեջ մտնելուն հաջորդող հաշվետու ժամանակաշրջանների համար հարկային մարմին ներկայացվող ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկներով առաջացող փոխհատուցվող գումարներին (2018թ. հունվարի 1-ից մինչև 2019թ. 2-րդ կիսամյակը ներառյալ ժամանակահատվածի համար սահմանված է եղել կիսամյակային ժամանակահատված):

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքով (25.10.2017թ. N180-Ն) սահմանվել է, որ յուրաքանչյուր կիսամյակին հաջորդող ամսվա 21-ի դրությամբ բյուջեից հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի գումարը ԱԱՀ վճարողի գրավոր դիմումի հիման վրա կարող է հաշվանցվել հարկ վճարողի այլ հարկային պարտավորությունների հաշվին և (կամ), պետական բյուջե հաշվեգրվող հարկային պարտավորությունների բացակայության պայմաններում, վերադարձվել: Ընդ որում, նշված դրույթը տարածվել է 2017 թվականի 2-րդ կիսամյակի հաշվետու ժամանակաշրջանների համար հարկային մարմին ներկայացվող ԱԱՀ-ի հաշվարկներով առաջացող՝ բյուջեից հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի գումարի վրա:

Վերոնշյալ կարգավորումների հետ կապված՝ առաջին խնդիրը կայանում է նրանում, որ օրենսգիրքն ուժի մեջ մտնելուց հետո ԱԱՀ-ի և ակցիզային հարկի գծով պարտավորությունները մարվել են նախ օրենսգիրքն ուժի մեջ մտնելուց հետո հաշվետու ժամանակաշրջանների համար հարկային մարմին ներկայացվող ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկներով առաջացող ԱԱՀ-ի և ակցիզային հարկի փոխհատուցվող գումարների հաշվին, այնուհետև՝ միասնական հաշվում առկա գումարի հաշվին, որից հետո՝ մինչև օրենսգիրքն ուժի մեջ մտնելը հաշվետու ժամանակաշրջանների համար հարկային մարմին ներկայացված ԱԱՀ-ի և ակցիզային հարկի հաշվարկներով առաջացող ԱԱՀ-ի և ակցիզային հարկի փոխհատուցվող գումարների հաշվին, իսկ դրանց բացակայության դեպքում՝ մինչև օրենսգիրքն ուժի մեջ մտնելն առաջացած գերավճարների հաշվին: Արդյունքում, մինչև օրենսգիրքն ուժի մեջ մտնելն առաջացած դեբետային գումարների առկայության պարագայում հարկ վճարողի ԱԱՀ-ի և ակցիզային հարկի պարտավորությունները մարվել են միասնական հաշվում առկա գումարների հաշվին, իսկ այլ պարտավորությունների գծով հաշվարկվել են տույժեր:

Հաջորդ խնդիրն այն է, որ յուրաքանչյուր հաշվետու կիսամյակին հաջորդող ամսվա 21-ի դրությամբ ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարը ԱԱՀ վճարողի գրավոր դիմումի հիման վրա միասնական գանձապետական հարկային հաշվին մուտքագրվելու դրույթը կիրառվում է 2017թ. 2-րդ կիսամյակից սկսած (2019թ. հուլիսի 1-ից կիրառվում է եռամսյակային

կտրվածքով), մինչդեռ՝ 2017թ. 2-րդ կիսամյակին նախորդող հաշվետու ժամանակաշրջաններին վերաբերող՝ բյուջեից հաշվանցման ենթակա ԱԱՀ գումարը հաշվանցվում է միայն հետագա հաշվետու ժամանակաշրջաններում առաջացած՝ բյուջե վճարման ենթակա ԱԱՀ-ի գումարների հաշվին:

Հարկ է նշել նաև, որ հարկային մարմնի վերլուծության արդյունքներով պարզվել է, որ 2017-2018թթ. ընթացքում հարկային մարմին ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափով հարկվող գործարքների գծով ներկայացված հայտերով վերադարձման ենթակա ԱԱՀ-ի փոխհատուցվող ընդհանուր գումարում հիմնավորված գումարի ամենափոքր շեղումներն արձանագրվել են 20-40 մլն դրամ միջակայքում, իսկ առավելագույն շեղումները՝ 40-100 մլն դրամ միջակայքում: ԱԱՀ-ի գումարների միասնական հաշվին մուտքագրման պարզեցված ընթացակարգը կիրառելու համար հիմք է ընդունվել ամենափոքր շեղումներ արձանագրված միջակայքի նվազագույն սահմանը, ինչը որոշակիորեն ստեղծում է ոչ հավասար մոտեցումներ ամենափոքր շեղումներ թույլ տված (20-40 մլն դրամ) հարկ վճարողների համար:

#### **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները.**

Նախագծով ԱԱՀ-ի և ակցիզային հարկի գծով պարտավորությունների մարման նպատակով առաջարկվում է սահմանել հետևյալ հերթականությունը: ԱԱՀ-ի և ակցիզային հարկի գծով պարտավորությունները մարվում են նախ տվյալ հարկատեսակի դեբետային գումարների հաշվին (այդ թվում՝ մինչև 2018 թվականի հունվարի 1-ը հաշվետու ժամանակաշրջանների համար ԱԱՀ-ի կամ ակցիզային հարկի հաշվարկներով (այդ թվում՝ ճշտված) առաջացած՝ բյուջեից հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի կամ ակցիզային հարկի գումարների հաշվին)), ապա միասնական հաշվում առկա գումարների հաշվին, այնուհետև՝ մինչև օրենսգիրքն ուժի մեջ մտնելն առաջացած գերավճարների հաշվին: Արդյունքում, հարկ վճարողի ԱԱՀ-ի և ակցիզային հարկի գծով պարտավորությունները նախ կմարվեն նաև մինչև օրենսգիրքն ուժի մեջ մտնելն առաջացած՝ բյուջեից հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի կամ ակցիզային հարկի գումարների հաշվին, իսկ միասնական հաշվում առկա գումարները կուղղվեն այլ պարտավորությունների մարմանը, որը հնարավորություն կտա այդ պարտավորությունները կատարել սահմանված ժամկետում և խուսափել դրանց գծով տույժերի հաշվարկից:

Նախագծով առաջարկվում է յուրաքանչյուր հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 21-ի դրությամբ ԱԱՀ վճարողի՝ ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարն ԱԱՀ վճարողի գրավոր դիմումի հիման վրա ԱԱՀ վճարողի միասնական գանձապետական հարկային հաշվին մուտքագրվելու դրույթը կիրառել նաև 2017թ. 2-րդ կիսամյակին նախորդող կիսամյակների համար, ինչը հնարավորություն կտա այդ գումարները հարկ վճարողի դիմումի հիման վրա օրենսգրքով սահմանված կարգով իրականացվող ստուգման կամ ուսումնասիրության արդյունքներով հիմնավորվելու դեպքում մուտքագրել միասնական

հաշվին և մարել հարկ վճարողի ցանկացած այլ հարկային պարտավորություն կամ դրանց բացակայության դեպքում վերադարձնել հարկ վճարողին:

Նախագծով առաջարկվում է բարձրացնել հաշվետու ժամանակաշրջանի համար ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափով հարկվող գործարքների գծով պարզեցված ընթացակարգով վերադարձման ենթակա ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարի առավելագույն չափը՝ 20 մլն դրամից դարձնելով 40 մլն դրամ:

Նախագծով առաջարկվում է պարզեցված ընթացակարգը կիրառել ոչ միայն ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափով հարկվող գործարքների գծով ԱԱՀ-ի գումարի փոխհատուցման համար, այլև յուրաքանչյուր հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 21-ի դրությամբ ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարի, իսկ մինչև օրենսգիրքն ուժի մեջ մտնելը՝ յուրաքանչյուր հաշվետու կիսամյակին հաջորդող ամսվա 21-ի դրությամբ բյուջեից հաշվանցման ենթակա ԱԱՀ գումարի փոխհատուցման համար:

Նախագծով առաջարկվում է նաև մինչև օրենսգիրքն ուժի մեջ մտնելն ընկած ժամանակահատվածի հաշվետու ժամանակաշրջաններին վերաբերող՝ բյուջեից հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի գումարների՝ նախագիծն ուժի մեջ մտնելուն հաջորդող տասներորդ օրվա դրությամբ առկա՝ մինչև 5 մլն դրամ մնացորդը մուտքագրել պետական գրանցում (հաշվառում) ստացած հարկ վճարողի միասնական հաշվին, առանց հարկ վճարողի կողմից դիմումի ներկայացման և օրենսգրքի 17-րդ բաժնով սահմանված կարգով իրականացվող ստուգման կամ ուսումնասիրության:

#### **Կարգավորման առարկան.**

ԱԱՀ-ի և ակցիզային հարկի գծով պարտավորությունների մարման հերթականության վերանայում, 2017թ. 2-րդ կիսամյակին նախորդող կիսամյակների համար ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարը ԱԱՀ վճարողի միասնական գանձապետական հարկային հաշվին մուտքագրվելու հնարավորության ստեղծում, ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափով հարկվող գործարքների գծով ԱԱՀ-ի գումարների փոխհատուցման պարզեցված ընթացակարգի կիրառում նաև յուրաքանչյուր հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 21-ի դրությամբ ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարի, իսկ մինչև օրենսգիրքն ուժի մեջ մտնելը՝ յուրաքանչյուր հաշվետու կիսամյակին հաջորդող ամսվա 21-ի դրությամբ բյուջեից հաշվանցման ենթակա ԱԱՀ գումարի փոխհատուցման համար, պարզեցված ընթացակարգով վերադարձման ենթակա ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարի սահմանված չափի բարձրացում:

#### **Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք.**

Նախագիծը մշակվել է Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից:

#### **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը.**

Նախագծի ընդունման արդյունքում՝

1) կվերանայվի ԱԱՀ-ի և ակցիզային հարկի գծով պարտավորությունների մարման

հերթականությունը, որի արդյունքում ԱԱՀ-ի և ակցիզային հարկի պարտավորությունները առաջնահերթ կմարվեն այդ հարկատեսակների դեբետային գումարների հաշվին (այդ թվում՝ մինչև 2018 թվականի հունվարի 1-ը հաշվետու ժամանակաշրջանների համար ներկայացված՝ ԱԱՀ-ի կամ ակցիզային հարկի հաշվարկներով առաջացած՝ բյուջեից հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի կամ ակցիզային հարկի գումարների հաշվին),

2) ԱԱՀ վճարողի միասնական գանձապետական հարկային հաշվին կմուտքագրվեն նաև 2017թ. 2-րդ կիսամյակին նախորդող կիսամյակների համար ԱԱՀ-ի կամ ակցիզային հարկի հաշվարկներով առաջացած՝ բյուջեից հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի կամ ակցիզային հարկի գումարները,

3) ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափով հարկվող գործարքների գծով ԱԱՀ-ի գումարների փոխհատուցման պարզեցված ընթացակարգը կտարածվի նաև յուրաքանչյուր հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 21-ի դրությամբ ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարի, իսկ մինչև օրենսգիրքն ուժի մեջ մտնելը՝ յուրաքանչյուր հաշվետու կիսամյակին հաջորդող ամսվա 21-ի դրությամբ բյուջեից հաշվանցման ենթակա ԱԱՀ գումարի փոխհատուցման համար,

4) կվերանայվի պարզեցված ընթացակարգով վերադարձման ենթակա ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարի սահմանված չափը. այն 20 մլն դրամից կդառնա 40 մլն դրամ,

5) նախագիծն ուժի մեջ մտնելուն հաջորդող տասներորդ օրվա դրությամբ առկա՝ մինչև 5 մլն դրամ բյուջեից հաշվանցման ենթակա ԱԱՀ գումարի մնացորդը հարկ վճարողի միասնական հաշվին մուտքագրման համար կկիրառվի առավել պարզ մեխանիզմ (առանց հարկ վճարողի կողմից դիմումի ներկայացման և առանց Օրենսգրքի 17-րդ բաժնով սահմանված կարգով իրականացվող ստուգման կամ ուսումնասիրության):

## **ՏԵՂԵԿԱՆՔ**

**«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունման կապակցությամբ այլ նորմատիվ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտության մասին**

«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունման կապակցությամբ այլ նորմատիվ իրավական ակտեր ընդունել անհրաժեշտ չէ:

## **ՏԵՂԵԿԱՆՔ**

**«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունման կապակցությամբ**

պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում եկամուտների և ծախսերի ավելացման կամ նվազեցման մասին

«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունման կապակցությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում եկամուտների և ծախսերի ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

ՆԱԽԱԳԻԾ

Երկրորդ ընթերցում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** Հայաստանի Հանրապետության 2016 թվականի հոկտեմբերի 4-ի հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 4-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետը ընդ լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ «է» ենթակետով:

«է. մինչև 2018 թվականի հունվարի 1-ը ավարտված հաշվետու ժամանակաշրջանների համար ներկայացված՝ ԱԱՀ-ի կամ ակցիզային հարկի հաշվարկներով (այդ թվում՝ ճշտված) առաջացած՝ բյուջեից հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի կամ ակցիզային հարկի գումարներից և դեբետային գումարներից.»:

**Հոդված 2.** Օրենսգրքի 325-րդ հոդվածի 4-րդ մասը «հաշվին» բառից հետո լրացնել «, ինչպես նաև մինչև 2018 թվականի հունվարի 1-ը ավարտված հաշվետու ժամանակաշրջանների համար ներկայացված՝ ԱԱՀ-ի կամ ակցիզային հարկի հաշվարկներով (այդ թվում՝ ճշտված) առաջացած՝ բյուջեից հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի կամ ակցիզային հարկի գումարների հաշվին,» բառերով:

**Հոդված 3.** Օրենսգրքի 348-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում ստված «եռամսյակին հաջորդող ամսվա 21-ի դրությամբ ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարի,» բառերից հետո լրացնել «Օրենսգրքի 457-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված՝ բյուջեից հաշվանցման ենթակա ԱԱՀ գումարի,» բառերով,

2) 7-րդ մասը «փոխհատուցվող գումարի» բառերից հետո լրացնել «, ինչպես նաև Օրենսգրքի 457-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված՝ բյուջեից հաշվանցման ենթակա



ԱԱՀ գումարի» բառերով,

3) 8-րդ մասում «իսկ յուրաքանչյուր հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 21-ի դրությամբ ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարի հաշվարկն՝ այդ ժամկետի դրությամբ» բառերը փոխարինել «իսկ յուրաքանչյուր հաշվետու եռամսյակին կամ Օրենսգրքի 457-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված՝ յուրաքանչյուր կիսամյակին հաջորդող ամսվա 21-ի դրությամբ ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարի կամ բյուջեից հաշվանցման ենթակա ԱԱՀ գումարի հաշվարկն՝ այդ ժամկետի դրությամբ» բառերով,

4) 10-րդ մասը շարադրել [հետևյալ նոր](#) խմբագրությամբ.

«10. Կառավարության սահմանած չափանիշներին բավարարող հարկ վճարողների կողմից ներկայացված՝ ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափով հարկվող գործարքների գծով, ինչպես նաև յուրաքանչյուր հաշվետու եռամսյակին կամ Օրենսգրքի 457-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված դեպքերում՝ յուրաքանչյուր հաշվետու կիսամյակին հաջորդող ամսվա 21-ի դրությամբ ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարի կամ բյուջեից հաշվանցման ենթակա ԱԱՀ գումարի մինչև 40 միլիոն դրամի հայտերի հիման վրա ԱԱՀ-ի գումարների մուտքագրումը միասնական հաշվին կատարվում է Կառավարության սահմանած պարզեցված ընթացակարգով և ժամկետներում:»:

**Հոդված 4.** Օրենսգրքի 456-րդ հոդվածում՝

1) 7-րդ մասը ճանաչել ուժը կորցրած,

42) 8-րդ մասը շարադրել [հետևյալ նոր](#) խմբագրությամբ.

«8. Եթե Օրենսգրքի 325-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգով ԱԱՀ-ի և (կամ) ակցիզային հարկի գծով հարկային պարտավորությունների մարումից հետո հարկային մարմին ներկայացվող՝ ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկով կամ ԱԱՀ-ի կամ ակցիզային հարկի հաշվարկներով պակասեցվում են նախկինում հարկային մարմին ներկայացված համապատասխան հաշվարկով հայտարարագրված հարկային պարտավորությունները, ապա հարկ վճարողի անձնական հաշվի քարտում առկա դեբետային գումարների կամ մինչև 2018 թվականի հունվարի 1-ը հաշվետու ժամանակաշրջանների համար ներկայացված՝ ԱԱՀ-ի կամ ակցիզային հարկի հաշվարկներով (այդ թվում՝ ճշտված) առաջացած՝ բյուջեից հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի կամ ակցիզային հարկի գումարների հաշվին մարված գումարը կրկին վերականգնվում է հարկ վճարողի անձնական հաշվի քարտում՝ որպես դեբետային գումար կամ որպես բյուջեից հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի կամ ակցիզային հարկի գումար (չի մուտքագրվում միասնական հաշվին):»:

**Հոդված 5.** Օրենսգրքի 457-րդ հոդված [ունը](#) լրացնել [հետևյալ բովանդակությամբ նոր](#) 7-րդ մասով.

« 7. Եթե մինչև Օրենսգիրքն ուժի մեջ մտնելը որևէ կիսամյակին հաջորդող ամսվա 21-ի դրությամբ հարկ վճարողն ունի հաշվետու ժամանակաշրջանում հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի գումարների՝ հարկվող շրջանառության նկատմամբ հաշվարկված ԱԱՀ-ի

գումարները գերազանցող գումար (սույն մասի կիրառության իմաստով՝ բյուջեից հաշվանցման ենթակա ԱԱՀ գումար), ապա այդ գումարը օրենքով սահմանված կարգով պետական գրանցում (հաշվառում) ունեցող հարկ վճարողի գրավոր դիմումի հիման վրա Օրենսգրքի 17-րդ բաժնով սահմանված կարգով իրականացվող ստուգման կամ ուսումնասիրության արդյունքներով հիմնավորվելու դեպքում մուտքագրվում է միասնական հաշվին, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի: Սույն մասի դրույթները տարածվում են յուրաքանչյուր կիսամյակի հաշվետու ժամանակաշրջանների համար հարկային մարմին ներկայացված ԱԱՀ-ի հաշվարկներով առաջացած՝ հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի գումարների՝ հարկվող շրջանառության նկատմամբ հաշվարկված ԱԱՀ-ի գումարները գերազանցող գումարի (բյուջեից հաշվանցման ենթակա ԱԱՀ գումար) վրա:»:

**Հոդված 6.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, բացառությամբ սույն օրենքի 2-րդ և 4-րդ հոդվածների, որոնք ուժի մեջ են մտնում 2020 թվականի հունվարի 1-ից: Սույն օրենքի պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրվա դրությամբ առկա՝ Օրենսգրքի 457-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված՝ մինչև 5 միլիոն դրամը ներառյալ բյուջեից հաշվանցման ենթակա ԱԱՀ գումարի մնացորդը մուտքագրվում է օրենքով սահմանված կարգով պետական գրանցում (հաշվառում) ունեցող հարկ վճարողի միասնական հաշվին, առանց հարկ վճարողի կողմից դիմումի ներկայացման և Օրենսգրքի 17-րդ բաժնով սահմանված կարգով իրականացվող ստուգման կամ ուսումնասիրության:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

/Հ	Առաջարկության հեղինակը, գրության ամսաթիվը, գրության համարը	Առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունը
	2	3	4	5
1.	ՀՀ կառավարություն	<p>Այլ օրենքների պահանջներին համապատասխանության տեսանկյունից նշենք հետևյալը.</p> <p>1. Նախագծի 1-ին հոդվածում «4-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր «է» ենթակետով.» բառերն առաջարկում ենք փոխարինել «4-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետում լրացնել նոր՝ «է» ենթակետ.»բառերով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասը:</p>	Ընդունվել է	Նախագծի 1-ին հոդվածում «4-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր «է» ենթակետով.» բառերը փոխարինվել են «4-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետում լրացնել նոր՝ «է» ենթակետ.» բառերով:

		<p>2. Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասում «1-ին մասը» բառերն առաջարկում ենք փոխարինել «1-ին մասում» բառերով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասը: Նույնը վերաբերում է նաև նույն հոդվածի 2-րդ մասին:</p>	<p>Ընդունվել է</p>	<p>Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասում «1-ին մասը» բառերը փոխարինել են «1-ին մասում» բառերով:</p>
		<p>3. Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված լրացման կապակցությամբ հայտնում ենք, որ Նախագծից պարզ չէ, թե որ բառերից հետո է նախատեսվում կատարել լրացումը, քանի որ «ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարի» բառերը Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 348-րդ հոդվածի 1-ին մասում օգտագործված են երկու անգամ: Մինչդեռ Նախագծին կից ներկայացված գործող օրենքի փոփոխվող հոդվածների մասին տեղեկանքից պարզ է դառնում, որ լրացումը նախատեսվում է 348-րդ հոդվածի 1-ին մասի «Օրենսգրքի 89-րդ հոդվածի» բառերից առաջ: Հետևաբար հաշվի առնելով նշվածը՝ առաջարկում ենք խմբագրել Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասը:</p>	<p>Ընդունվել է</p>	<p>Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասը խմբագրվել է, ինչի արդյունքում հստակեցվել է, որ լրացումը նախատեսվում է կատարել «եռամսյակին հաջորդող ամսվա 21-ի դրությամբ ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարի» բառերից հետո:</p>

		<p>4. Նախագծի 3-րդ հոդվածի 4-րդ մասում և 4-րդ հոդվածի 2-րդ մասում «հետևյալ խմբագրությամբ» բառերն առաջարկում ենք փոխարինել «նոր խմբագրությամբ» բառերով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը: Միաժամանակ առաջարկում ենք Նախագծի 4-րդ հոդվածի մասերը համարակալել հերթական համարներով:</p>	<p>Ընդունվել է</p>	<p>Նախագծի 3-րդ հոդվածի 4-րդ մասում և 4-րդ հոդվածի 2-րդ մասում «հետևյալ խմբագրությամբ» բառերը փոխարինվել են «նոր խմբագրությամբ» բառերով:</p>
		<p>5. Նախագծի 5-րդ հոդվածում «457-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 7-րդ մասով» բառերն առաջարկում ենք փոխարինել «457-րդ հոդվածում լրացնել նոր՝ 7-րդ մաս» բառերով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասը:</p>	<p>Ընդունվել է</p>	<p>Նախագծի 5-րդ հոդվածում «457-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 7-րդ մասով» բառերը փոխարինվել են «457-րդ հոդվածում լրացնել նոր՝ 7-րդ մաս» բառերով:</p>